ԱՐՑԱԽ. ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԸ ՏԱՆՈՒՄ ԵՆ ԴԵՊԻ ԳԱՆՁԱՍԱՐ

Այդ օրը բոլոր ճանապարհները տանում էին Գանձասար: Վաղ առավոտից Խաչեն գետի ձախափնյա գեղատեսիլ բլրի կողմն էին հոսում մարդիկ այդ զարմանալի հողի բոլոր ծայրերից: Այստեղ սիսա արդեն յոթուկես հարյուրամյակ հպարտորեն հառնում է հրաշք եկեղեցին, որի ճարտարապետական մարմնավորման կատարելությունը առավել ցայտունորեն է բնութագրում այն կերտած հայ ժողովրդի հոգևոր աշխարհը:

Հոկտեմբերի առաջին կիրակին նոր էջ գրեց Գանձասարի բազմաչարչար կենսագրության մեջ, որը մարմնավորում է արցախցիների անսասան կամքը, նրանց անմար հավատը բարու և արդարության հաղթանակի հանդեպ: Երկար տասնամյակների ընթացքում առաջին անգամ Սուրբ Հովհաննես Մկրտչի վանքում տեղի ունեցավ ժամերգություն, որն անցկացրեց Արցախի հոգևոր առաջնորդ Պարգև եպիսկոպոսը: Կիրակնօրյա պատարագին հաջորդեց մաղթանքն ի պատիվ եկեղեցու հիմնադիրների և առաջին ապաստավորների: Այստեղտև նրա հնամյա կամարների ներքո նորից կհնչեն հավատի ու խաղաղության խոսքեր, որոնց այնքան կարոտ է լեռնային երկրամասը: Զանգերի դողանջը, որը թևածում է Խաչենի ձորում և իջնում նրա եկեղեցիների ու վանքերի, խաչքարերի ու ամրոցների վրա, ապրողներին ասես մի ավելորդ անգամ հիշեցնում էր, որ հավերժական է Գանձասարը, ինչպես որ հավերժական են նրա քրիստոնեից խոսքը և հայոց հողը, նրա բիբլիական արարող ժողովուրդը:

Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

(Արմենպրեսի սեփ. թղթ.)